ՀՈՎՀԱՆ ՕՃՆԵՑԻՆ ԵՎ ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿԸ

Ե.Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

Հայ ժողովրդի պատմության մեջ Հովհան Օձնեցու (VII–VIII դդ.) խաղացած դերը ճիշտ բացատրելու համար հարկ է ընդգծել նրա ապրած ժամանակաշրջանի երկու խոշոր առանձնահատկությունները: Առաջինն այն էր, որ Հայաստանը, գտնվելով արևմուտքը և արևելքը կապող տարանցիկ առևտրական ճանապարհների վրա, տնտեսապես և մշակութապես զարգանալու մեծ հնարավորություն ուներ: Սակայն քաղաքական ինքնուրույնություն և ապահովություն չունենալու պատճառով ծայր առած զարգացումը երբեք էլ բնական վիճակին հասնել չէր կարող: Ավելին, պայմաններն այնպես դասավորվեցին, որ շատ հայ մտածողների, այդ թվում Հովհան Օձնեցու դարակազմիկ նշանակություն ունեցող դրույթները, հազիվ սաղմնավորված, խեղդվեցին հենց խանձարուրի մեջ կամ մնացին ազգային շրջանակներում:

Երկրորդ առանձնահատկությունը ազգային–աղատագրական պայքարն էր: Քաղաքական անկախությունը կորցնելուց հետո հայերը նվաճողներին ոչ միայն կուլ չգնացին, այլև սկսեցին պայքարել հանուն ազգային ինքնուրույնության պահպանման: Այս պայքարն իր անմիջական արձագանքն ունեցավ հայ տեսական մտքի վրա՝ այն մղելով դեպի քաղաքական արմատականություն: Կարելի է ասել, որ հայ առաջադեմ մտածողների մտքի թռիչքները մեծ մասամբ դրա բարերար ազդեցության հետևանքն էին, ինչը նպաստեց մտքի ու գործի աշխարհիկացմանը:

Արաբա–բյուզանդական բախումների շրջանում, երբ Հայաստանում արաբների տիրապետությունը աստիճանաբար ամրապնդվում էր, Բյուզանդիան ոչ միայն չէր կարողանում կազմակերպել Հայաստանի պաշտպանությունը, այլև, սեփական շահերին հակառակ, բորբոքում էր դավանաբանական վեճեր՝ դրանով մեծ անբավականություն պատճառելով իրենց ազգային ավանդույթներին հարազատ մնալ ցանկացող հայերին: Բանն այն է, որ, զրկված լինելով պետական և ռազմական կառույցներից, հայերն ինքնուրույնությունը պահպանելու միայն մի միջոց ունեին՝ եկեղեցին, որը, գործելով հոգևոր մշակույթի ոլորտում, շատ դեպքերում հարկադրված էր լինում դուրս գալ նաև քաղաքական ասպարեզ: Մանավանդ Քաղքեդոնի ժողովից հետո, առանձնացած լինելով արևմտյան քրիստոնեական եկեղեցիներից, հայ ազգային եկեղեցին իր ամբողջ ազդեցությունն ուղղում էր ոչ միայն քրիստոնեության տարածմանը, այլև հայ ժողովրդի մեջ այն արմատավորելուն, միատարր և անաղանդ դարձնելուն: Այն ժամանակ եվրոպական երկրներում քրիստոնեության տարածումը միաժամանակ նպաստում էր դրանցում լատիներենի տարածմանը, և լատինական այբուբենը դարձավ նրանց գիրը: Հայաստանում դա տեղի չունեցավ: Հայերը եղան արևելյան այն ժողովուրդներից, որոնք քրիստոնեությունն ընդունելուց հետո էլ համառորեն շարունակեցին պայքարել իրենց ազգային և մշակութային ինքնուրույնության համար: Այնպիսի դարավոր մշակույթ և պետականություն ունեցող մի ժողովուրդ, ինչպիսին պարսիկներն էին, մահմեդականությունն ընդունելուց հետո յուրացրեցին արաբական գիրը: Հայերը, ընդհակառակը, քրիստոնեությունն ընդունելով հանդերձ, ստեղծեցին

իրենց սեփական գիրը, գրավոր լեզուն և մշակույթը, այն դարձնելով ինքնուրույնության պահպանման մեծագույն կռվան[1]:

VII–VIII դդ. ինքնուրույնության այդ ձգտումը մասամբ վերածվեց հակադրության՝ Բյուզանդիայի միջոցով եկող հունա–հռոմեական ազդեցության դեմ: Այս կապակցությամբ Մ. Աբեղյանը գրում է. «Հայոց գրականության վրա հունական ազդեցությունն այլևս մեծ չափով չէր լինում: Հայերը դավանության, ինչպես նաև հունական կողմից գործադրված բռնությունների պատճառով ոչ միայն սառն էին վերաբերվում դեպի հույները, այլև խորշում էին նրանցից: Ուսումը կատարելագործելու համար այլևս ուսանողներ չէին ուղարկում Բյուզանդիա... Ուսումն ամփոփվում էր գլխավորապես հայկական դպրոցներում»[2]: Այդպիսի պարագաներում անբնական չէր հայերի հարկադրական թեքումը դեպի արաբները:

Տվյալ ժամանակաշրջանում հայերի խտացված տրամադրությունների առաջին արտահայտիչը եղավ Հովհան Օձնեցին:

Կայսրության ընդհանուր քաղաքականությունը և դարասկզբին տեղի ունեցած դեպքերը հայ կաթողիկոսի մեջ ատելության զգացում առաջացրին դեպի այն ամենը, ինչը բյուզանդական կնիք էր կրում իր վրա: Համբերության բաժակը լցվեց մասնավորապես այն ժամանակ, երբ դավանաբանական հարցերը առաջին պլան մղվեցին: Անկախ պահի անձնական տրամադրություններից՝ Օձնեցու համար հրամայական էին դառնում հարազատ ժողովրդի կենսական շահերը: VII դ. ազգային մշակութաքաղաքական ինքնորոշումը մարմնավորող ձևը՝ նախարարությունը, մի կողմ էր նետված: Եվ քանի որ չկար մի ուժ, որը կարողանար պահպանել ոչ միայն ազգային արժանապատվությունը, այլև, հակառակ արաբների ցանկության, զորավիգ կանգներ ազգի գոյությանը, ապա մնում էր մի ելք. կամ հաշտվել հայ ժողովրդի ներքին ինքնավարության ոչնչացման հետ, կամ համաձայնության գալ արաբների հետ: Այս վերջին ճանապարհն էլ ընտրեց Օձնեցին, քանի որ բովանդակ Հայաստանը ինքնահոժար երես էր դարձնում բյուզանդական կայսրությունից և կատարյալ հպատակություն հայտնում արաբական խալիֆաթին:

Օձնեցու կողմից վարվող այս քաղաքականությունը հայերի համար անհամեմատ ավելի նպաստավոր վիճակ էր ստեղծում, քան նրանք ունեին կամ պետք է ունենային բյուզանդական տիրապետության տակ: Դա մի ինքնավարական վիճակ էր արաբների հովանավորության տակ՝ հարկ վճարելու պայմանով:

Այս քաղաքականությունը հատկապես պետական իշխանություն չունեցող ազգի համար, նշանավորվում և գնահատվում է իբրև պետական լայն ըմբռնողականության դրսևորում: Բանն այն է, որ VII դարում, հատկապես Թեոդորոս Ռշտունուց հետո, Հայաստանում հաստատվում է մի իրավիճակ, որը հատուկ էր այդ երկրի ճակատագրին՝ իբրև քաղաքական մի թույլ կազմակերպության[3]: Հայ ժողովուրդը նորից է սկսում տարուբերվել իր հայրենիքի վրա իրավունքներ տարածող երկու մեծ տերությունների փոխհարաբերությունների մեջ, հակվելով դեպի այն կողմը, որը ուժեղ էր

---

[1] Մ. Աբեղյան, Հայ հին գրականության պատմություն, հ. Ա, Ե., 1944, էջ 359, Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1967, էջ 93–102, Եղիշե քահ. Պետրոսյան, Հայ եկեղեցու պատմություն, մասն Ա, Ե., 1990, էջ 48–49:

[2] Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 360:

[3] Գ. Սարգսյան, Պատմաբանասիրական ճշգրտումներ [Պատմա–բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1964, № 2]:

փոխադարձ մրցակցության մեջ: Նա պարտավորված էր այդպես անել իր կյանքն ու խաղաղությունը ապահովելու համար, բայց դժբախտությունն այն էր, որ ուժեղացած կողմին հնազանդվելը գրգռում էր թույլ կողմի դժգոհությունը, որը և աղետալի էր դառնում, երբ վերջինն էր սկսում ուժեղանալ:

VIIդ. առաջին քառորդին երկու գերհզոր գիշատիչ պետությունների աքցանի մեջ սեղմված Հայաստանում Հովհան Օձնեցին միակն էր այն չափազանց սակավաթիվ հայ հոգևոր, քաղաքական գործիչներից, որոնք սոսկ զգացմունքներով չէին առաջնորդվում, նախապաշարմունքների տակ չէին ճնշվում, այլ գործում էին այնպես, ինչպես տարաբախտ երկրի շահն էր թելադրում: Դիվանագիտական նկատառումներով դաշնակցել մի մահմեդական պետության հետ՝ ընդդեմ քրիստոնյա պետության, հավասարը չունեցող խիզախ ձեռնարկում էր, որի նմանը հայոց պատմության մեջ, եթե չհիշատակենք VIIդ. հայ երևելի զորավար Թեոդորոս Ռշտունու գործունեությունը, չի եղել: Եվ հնարավոր է, որ մեր ազգի ճակատագիրն այլ կերպ դասավորվեր, եթե հայ նախարարների և բարձրաստիճան հոգևորականների մեջ Օձնեցու նման քաղաքական մտածողները շատ լինեին: Ցտեսնված հանդուգն էր Օձնեցու կատարած քայլը, եթե նկատի ունենանք ժամանակի հոգևորականության անսահման ատելությունը դեպի մահմեդական կրոնը: Սակայն Օձնեցին ամենից առաջ ելնում էր ժամանակի պահանջներից՝ մտածում էր, որ առայժմ հզորացող արաբական խալիֆայությունը անարգել ընթանում է վերելքի ուղիով, իսկ բյուզանդական կայսրությունը, ընդհակառակը, թուլանում է, և գիտակցում էր, որ Հայաստանն իր ջլատված ուժերով ոչ միայն չէր կարող կանգնեցնել արաբական առաջխաղացումը, այլև բավարարել Բյուզանդիայի գրգռված ախորժակը: Կաթողիկոսը ելքը գտնում էր արաբների հետ հաշտ, ռազմական բախումներից զերծ քաղաքականության մեջ, որպեսզի դրանով ժողովրդին գոնե առժամանակ փրկի անտեղի զոհերից, իսկ երկիրը ավերումից: Ահա նման բարդ հանգամանքներում հայ կաթողիկոսի ճիշտ՝ ժողովրդի շահերից բխող կողմնորոշումը նրան բարձրացրել էր ժողովրդականության ամենապատվավոր աստիճանին:

Ինչպես հայտնի է, VIIդ. վերջին և VIIIդ. սկզբին մեր ժողովրդի կողմից բազմաթիվ փորձեր էին արվում արաբա–բյուզանդական լուծը թոթափելու համար, սակայն դրանք բոլորն էլ վերջանում էին անհաջողությամբ, դեռ ավելին՝ բազմաթիվ նախարարական տներ ոչնչանում էին, իսկ շատ նախարարներ էլ թողնում են արաբական տիրապետության սահմանները և անցնում Վրաստան ու Բյուզանդիայի տարածքը: Երկիրը սկսում է ամայանալ: Հատկապես Սահակ Զորուփորցու (677–703թթ.) կաթողիկոսության ժամանակից սկսած՝ արաբական տիրապետությունը վերջնականապես հաստատվում է Հայաստանում, և այդ պատճառով հունաց դավանական խնդիրները կորցնում են իրենց կարևորությունը: Երբ բյուզանդական կայսրությունը կորցնում է իր հզորությունը, հետևապես և հեղինակությունը, հայերը Սահակ Զորուփորցի կաթողիկոսի գլխավորությամբ հատուկ պատվիրակություն են ուղարկում Դամասկոս, որպեսզի բանակցությունների միջոցով մեղմեն խալիֆի բարկությունը, սակայն ճանապարհին կաթողիկոսը մահանում է, և բանակցությունների գործը մնում է անավարտ: 705թ. նորից վերսկսվում է արաբա–բյուզանդական պատերազմը, որտեղ բյուզանդացիները մի անգամ ևս ջախջախիչ հարված են ստանում: Այդ թոհուբոհի ընթացքում Հայաստանի սոցիալ–տնտեսական և քաղաքական վիճակը խիստ վատանում է: Ժամանակի երևելիները ելք են փնտրում հայ ժողովրդին այդ դրությունից դուրս բերելու

համար: Եվ այն, ինչ չէր հաջողվել անել Սահակ Զորուփորցուն, հաջողվում է անել Հովհան Օձնեցուն (717-728թթ.): Նա հատուկ գիվանագիտական առաքելությամբ այցելում է Դամասկոս՝ խալիֆին[4]: Բանակցություններից հետո կնքվում է մի պայմանագիր, որի մեջ ներկայացվող կետերն ըստ էության համընկնում են Թեոդորոս Ռշտունու՝ խալիֆի հետ կնքած 652թ. պայմանագրի կետերին:

Այսպես. 1) Հայաստանը թոթափում էր Բյուզանդիան տիրապետությունը և ընդունում արաբական խալիֆայության հովանավորությունը: 2) Հայ հոգևորականությունը ազատվում էր որևէ հարկային պարտավորություն կատարելուց: 3) Արաբական խալիֆայության համաձայնությամբ և թույլտվությամբ, հայերը կարող էին ունենալ որոշակի քանակությամբ զորք և այլն: Ինչպես տեսնում ենք, հայ-արաբական պայմանագիրն իր բնույթով և բովանդակությամբ ոչ միայն ապահովում էր երկրի անվտանգությունը, այլև որոշ չափով երաշխավորվում էր Հայաստանի ներքին ինքնավարությունը[5]:

Հայ մատենագրության մեջ այն տեսակետն է տարածված, թե Օձնեցու դեղեցկության համբավն էր խալիֆի հետաքրքրությունն առաջացրել, և նա ցանկացել էր անպայման տեսնել այդ առասպելական դեղեցկության տեր անձնավորությանը: Մեր կարծիքով, դա չէ կարևորը, և այդ հարցում ամեն տեսակի չափազանցություններ ու առասպելներ հնարավոր են: Էականը, անկասկած, այն շրջադարձն էր, որ հայերը կատարեցին բյուզանդական կայսրությունից դեպի արաբական խալիֆայությունը[6]: Փաստորեն, շնորհիվ այդ պայմանագրի, հայ նախարարները ստանում էին այնպիսի իրավունքներ, որոնք խալիֆայության այլ նահանգների քրիստոնյա հպատակները գրեթե չունեին: Եվ դա այնքան ցցուն էր դրսևորվում, որ հայ նախարարների ժառանգական իրավունքի նկատմամբ այս զիջող վերաբերմունքը հետագա շատ խալիֆներ և ոստիկաններ հազիվ էին հանդուրժում:

Ելնելով պայմանագրից, արաբ ոստիկանը կոչ արեց վտարանդի բոլոր հայ նախարարներին վերադառնալ հայրենիք՝ նրանց խոստանալով իրենց հին, ժառանգական տիրույթները: Հայ նախարարները, Սմբատ Կյուրոպաղատ Բագրատունու գլխավորությամբ, վերադարձան հայրենիք: Բացի Վրաստան և բյուզանդական տարածք փախած նախարարներից, վերադարձան նաև արաբների կողմից Դամասկոս գերի տարված բազմաթիվ նախարարներ: Հայոց իշխանին ու սպարապետին թույլատրվեց պահել համապատասխան քանակի ռազմական ուժ և այլն: Վտարանդի նախարարների վերադարձով նորից ամրապնդվեց Հայկական լեռնաշխարհը: Մեծ Հայքը նորից ժառանգաբար կառավարվում էր հայ նախարարների ձեռքով՝ որպես զեկավար և միավորող օղակ ունենալով հայ իշխանին ու սպարապետին:

VIII դ. սկզբին ևս Հայաստանում տիրող քաղաքական տրամադրություններն արտահայտվեցին կրոնական քողի տակ, հակաքաղքեդոնական պայքարի ձևով, ինչպես այդ տեղի էր ունեցել երկու դար առաջ՝ Եռսրով Անուշիրվանի օրոք: Մինչև VIII դ. սկիզբը Հայոց կաթողիկոսի իրավասությունները տարածվում էին ոչ միայն Հայաստանում, այլև Աղվանքի և Վրաստանի վրա: Արաբական առաջին արշավանքների նախօրյակին

---

[4] Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակն, Ս.Պետերբուրգ, 1879, էջ 138:

[5] Վ.Ա. Հակոբյան, Մեր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. 2, Ե., 1956, էջ 129:

[6] Տե՛ս Յոհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 100-101:

Վրաստանում արդեն վերջնականապես հաստատվել էր քաղկեդոնական դավանանքը, գիտենից մեկ դար հետո Աղվանքը նույնպես անջատողական ձգտումներ էր դրսևորում: Սակայն VII դ. սկզբին աղվանական եկեղեցին նորից ենթարկվեց Հայոց եկեղեցուն, և առաջել սրությամբ դրվեց հակաքաղկեդոնական պայքարի հարցը:

Դամասկոսից վերադառնալուց հետո Հովհան Օձնեցին իր բոլոր հարաբերությունները խզեց հույների հետ և վճռական պայքար ծավալեց քաղկեդոնության դեմ: Նա վերացրեց նույնիսկ հունական ծեսերից հայ եկեղեցական ծիսակատարությունների մեջ մտած բոլոր նորամուծությունները:

Բյուզանդական կայսրության, քաղկեդոնության դեմ ուղղված Օձնեցու գործունեության ամենանշանակալի արդյունքներից էր հայ-ասորական միության ստեղծումը: Նրա նախաձեռնությամբ Մանազկերտ քաղաքում գումարվեց հայ և ասորի եկեղեցիների միացյալ ժողով, որին ներկա էին Հայոց կաթողիկոսը 23 եպիսկոպոսներով և 8 վարդապետներով, իսկ ասորիների կողմից ներկա էին 6 եպիսկոպոս: 726թ. կայացած ժողովի առանցքն էին կազմում դավանաբանական այն հարցերը, որոնք պտտվում էին Քաղկեդոնի որոշումների շուրջը: Ժողովը նզովեց և մերժեց հույն եկեղեցու որդեգրած երկաբնակ վարդապետությունը: Հայ և ասորի եկեղեցիների միացյալ ժողովը և նրա ընդունած հակաքաղկեդոնական խիստ որոշումները խալիֆայության կազմում ապրող Բյուզանդիային սահմանամերձ երկու ժողովուրդների քաղաքական կողմնորոշման արտահայտությունն էին դաղափարախոսական քողի տակ: Եթե մինչ այդ կաթողիկոս Եղիա Արճիշեցին ձգտում էր հայ-աղվանական եկեղեցիների միությունը, ապա Հովհան Օձնեցին դրուխ բերեց հայ-ասորական դաշինքը միշտ հանդես գալով հակաքաղկեդոնական դիրքերից:

Ժողովի շարժառիթն այն էր, որ Հովհան Օձնեցին ցանկանում էր Հայաստանը և հայ եկեղեցին ազատել բյուզանդական ազդեցությունից և քաղկեդոնական հավատից: Դեռևս Հովհան Օձնեցու նախորդներն էլ՝ Եղիա Արճիշեցի և Սահակ Ձորոփորցի կաթողիկոսները, եռանդուն հակաքաղկեդոնական գործունեություն ծավալեցին, բայց ոչ մի արդյունքի չհասան: Միայն Հովհան Օձնեցուն հաջողվեց իր նախորդների երազանքը վերջնականապես իրականացնել ամբողջովին ընջելով և անհետացնելով քաղկեդոնական սովորությունները հունական Հայաստանից:

Մանազկերտի ժողովը դարակազմիկ նշանակություն ունեցավ Հայաստանի և հայ եկեղեցու համար: Նրա ընդարձակ արձանագրությունը, որը պայծառ լույս սփռեց երկու եկեղեցիների դավանաբանական մանրամասների վրա, նպատակին հասցրեց Հովհան Օձնեցու այն նախաձեռնությունը, որն իրականում մերժում էր ծայրահեղ հուլիանական ուսմունքը, իսկ հուլիանական վարդապետությունը ըստ էության, մնաց կանգուն[7]:

Եթե մենք Հովհան Օձնեցու գործերն ուշադրությամբ կարդանք, այնտեղ կգտնենք ճիշտ և միշտ նույն դավանությունը, որն արտահայտված է Մանազկերտի ժողովի նզովքների մեջ[8]:

Ինչպես նշեցինք, ելնելով քաղաքական համեմատաբար բարենպաստ պայմաններից՝ հայ եկեղեցին VII դ. վերջին և VIII դ. սկզբին շարունակեց իր

---

[7] Երվանդ վարդապետ Տեր-Մինասյան, Հայ եկեղեցու հարաբերությունները ասորոց եկեղեցիների հետ, Էջմիածին, 1908, էջ 179:

[8] Նույն տեղում, էջ 182-184:

ներքին ինքնորոշման գործունեությունը: Հովհան Իմաստասեր Օձնեցի կաթողիկոսը եկեղեցու դիրքերն ամրապնդելու և նրա ազգային սկզբունքները հաղթական դարձնելու համար ձեռք առավ մի շարք եռանդուն միջոցառումներ: Արաբական ուժի վրա հենված կաթողիկոսը պայքար սկսեց այն բոլոր հոսանքների դեմ, որոնք հակառակ էին ազգային եկեղեցուն: 720թ. նա Դվինում գումարեց եկեղեցական ժողով, որն ընդունեց նրա խմբագրած 32 կանոնները, որոնցով վերականգնվում էին հայ եկեղեցու ծեսական խանգարված կարգերը: Մասնավորապես, 32-րդ կանոնն ուղղված էր պավլիկյանների դեմ: Պակաս անդիջում չէր նաև Օձնեցու պայքարը քաղկեդոնության դեմ: Այստեղ նրա գործողությունները մեծ արձագանք են գտել ժողովրդական ավանդությունների մեջ: Այսօր էլ ժողովուրդը պատմում է, թե ինչպես է իր սրբացրած Հովհան Օձնեցին ժողովրդին պաշտպանում բյուզանդական բռնադատիչներից: Կամ ինչպես և ինչու Օձնեցին գնաց խալիֆի մոտ: Շատ հետաքրքիր այլաբանական ձևեր է ստանում ժողովրդի մտածողության մեջ քաղկեդոնական և հակաքաղկեդոնական պայքարը: Այս պայքարի ընթացքում Օձնեցու մարդկային հմայքը, ժողովրդականությունը, կրոնաղավանաբանական, փիլիսոփայական, դիվանագիտական գործունեության նշանակությունը այնքան են մեծանում, որ նա անցնում է ժողովրդական ավանդությունների մեջ: Նրա մասին առասպելներ են հյուսվում թե՛ իր ժամանակաշրջանում և թե՛ հետագա դարերում: Այս առումով մեր երկրորդ ու ձիգ պատմության մեջ Օձնեցու զուգակշիռը ներկայացնող երկրորդ հոգևոր և քաղաքական գործիչը մենք չենք տեսնում: Ըստ «Փորձ», «Արարատ» և այլ ամսագրերի ու Կանոնագրքի տեղեկությունների, կարելի է եզրակացնել, որ Հովհան Օձնեցին կենսախինդ, խանդավառ մարդ էր, որը մշտապես մասնակից է եղել ազգային, հասարակական և կրոնաղավանաբանական գործերին:

Մեր խորին համոզմամբ, հայ ժողովրդին մատուցած Հովհան Օձնեցու ծառայությունների մեջ առանձնանում և հատկապես մեծ արժեք է ներկայացնում նրա քաղաքական և դիվանագիտական գործունեությունը: Այդ ասպարեզում որքան հրաշալի, նույնքան և զարմանալի են եղել Օձնեցու վերելքն ու սխրանքը: Միևնույն ժամանակ, նրա պայքարը ներքին և արտաքին թշնամիների դեմ եղել է ոչ պակաս դժվարին և բարդ: Որպես բանիմաց բարձրաստիճան հոգևորական՝ Օձնեցին քաղաքականության մեջ առաջնորդվում էր բացառապես ազգային-քաղաքական շահերով: Քաղաքականությունը նա դիտում էր որպես կանխատեսման արվեստ, պահի անվրեպ զգացողություն և համակ՝ ճկունություն, իրապաշտություն ու իրադարձությունների անկանխակալ գնահատում և ժամանակավոր նահանջ՝ հեռահար հաղթանակի մանրազնին հաշվառումով:

Նկատենք, որ բոլոր ժամանակներում էլ դժվար է եղել ազգի շահերն արտահայտող ճշմարիտ քաղաքական ու հոգևոր գործիչների ճակատագիրը, նրանց, ովքեր, ճշմարտության ու բարու պատգամախոսի իրենց կոչմանը հավատարիմ, գլուխ չեն խոնարհել բախտի կամակոր ալիքներով ժողովրդի վզին փաթաթված իրավիճակի առաջ, այլ արահետներ են գտել նրան մայրուղի դուրս բերելու համար: Այսպես, VIII դ. սկզբի՝ ջանադրվող քաղաքականության ռազմավարության կիզակետը պետք է դառնար ամեն տեսակի ու բնույթի անակնկալ պատահականություններից հայ ժողովրդի շահերի անվրեպ ապահովումը: Այնպիսի փոքրաքանակ քաղաքակիրթ ազգի ազատագրման համար, ինչպիսին հայոց ազգն է, վիճարկվում են գոյատևման միայն երկու ճանապարհ. կա՛մ պետք է ունենալ ռազմական մեծ հզորություն, կա՛մ պետք է

քաղաքականության և դիվանագիտության մեջ շատ ճկուն և ուժեղ լինել: Առաջինը մենք չունեինք, մնում էր բնության տված ամենազոր կարողությամբ զինվորագրվել երկրորդին, որը և սրբությամբ կատարեց իմաստասեր կաթողիկոսը: Այն, որ 1300 տարի առաջ Օձնեցին խորհում և ջանում էր արաբական կողմնորոշման օգտին, նրա քմահաճույքը չէր: Մեր ազգի վիճակը այդպես էր թելադրում: Պետականությունից զրկված մեր ժողովուրդը իր ֆիզիկական գոյությունը պահելու համար պետք է անպայման հենարան փնտրեր: Միանգամից չէ, որ Օձնեցու հայացքը դարձավ դեպի արաբական խալիֆաթը: Բայց անխուսափելիորեն պետք է դառնար, որովհետև մեր կյանքի իրական պայմաններն էին այդ թելադրում: Եվ՞ պետք է ասել, որ այդ կողմնորոշումը մեծ մասամբ ճիշտ դուրս եկավ:

Ելնելով ընձեռված իրավունքներից ու հնարավորություններից՝ Օձնեցին սկզբունք է ընդունում իր ժողովրդի առաջնային՝ ամենատարրական շահը, նրա գոյության պահպանումը: Անհատների կամ փոքր խմբերի համար, որոնք հավաքական որակ չեն կազմում, ընդունելի և խրախուսելի է համարվում «Լավ է մեռնել պատվով, զենքը ձեռքին, քան ապրել ծնկաչոք» կարգախոսը, սակայն այն անընդունելի է մի ամբողջ ժողովրդի համար, եթե անգամ տվյալ ժողովրդի կառավարող վերնախավը ցանկանար կանգնել այդ ուղու վրա: Ըստ Օձնեցու, առանձին անձինք կամ առանձին խմբեր խանդավառության պահին կամ հուսահատության պոռթկումի ժամանակ կարող են դերադասել մահը խայտառակությունից և իսկապես մեռնել հերոսի մահով, բայց ազգը ամբողջությամբ դրան չի գնա: Ինքնապահպանման հզոր բնազդը նրան երբեք թույլ չի տա ինքնասպան լինել:

Օձնեցին կանխատեսում էր թե՛ արաբների և թե՛ բյուզանդացիների տիրապետության դալիք ճգնաժամը ու մեր ժողովրդի համար ամենավերջին ազատագրության ժամանակաշրջանը: Մակայն տվյալ պահին ազգի փրկության առավելագույն հնարավորությունը նա տեսնում էր միայն հակառակորդների հետ համաձայնության գալու մեջ: Իհարկե, դա չէր նշանակում լռությամբ տանել թշնամու հասցրած տարբեր անպատվությունները: Ընդհակառակը, հարկավոր էր օգտվել երկու հսկա դիշատիչ ուժերի անխուսափելի բախումներից, ժամանակ շահել և հակադրությունների արդյունքն ու ժամանակը ծառայեցնել ազգի շահերին: Մեր երկրի բացառիկ օրհասական վիճակում հենց այդ դիվանագիտական առաքելությանն էլ ամբողջ էությամբ զինվորագրվել էր իր ժողովրդին անմնացորդ նվիրված երևելիներից մեկը՝ Հովհան Օձնեցին[9]:

Անսահմանորեն սիրելով իր հայրենիքը՝ Օձնեցին ոչ միայն դիվանագիտական ուղիներ էր որոնում իր աշխարհի ազատության համար, այլև գործնականում դյուրավորում էր ազգի լուսավորման ճանապարհը: Նա այն մեծ առաքյալներից էր, որը ջահակիր է դառնում իր ժողովրդի ազատագրության և առաջադիմության ճանապարհին[11]:

Օձնեցին եղավ այն եղակի մեծ անհատներից, որն իր ժամանակակիցներից ավելի խանդավառով հավատքով զինվորագրվեց հայության

---

[9] Մ.Օրմանյան, Ազգապատում, հ. 1, Կ.Պոլիս, 1912, էջ 794:

[10] Եղիշե քահ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 70-71:

[11] Տե՛ս Յոհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմություն հայոց, էջ 100-101:

պահպանության վեհ գործին[12]: Բայց, չգիտես ինչու, մինչև օրս Օձնեցու գործունեության ուսումնասիրությունը ստվերի մեջ է եղել, արխիվային փոշին գեռ չի բարձրացել նրա գործերի վրայից[13]:

Օձնեցին իր նշանակությամբ մեծագույնն է VIII դ. Հայ մտածողներից: Հայ կաթողիկոսի բարձրացրած հարցերի տեսակետից (ազգային—ազատագրական շարժում, պայքար քաղկեդոնականության դեմ, հայոց ուժերի միավորում, «Կանոնագիրք Հայոց» և այլն) մեր իրականության մեջ վաղուց արդեն չէր եղել մի մտածող, որն այնքան արդիական լինեք իր ժամանակի համար, ինչպես Օձնեցին:

Կրոնական և քաղաքական տաղանդավոր գործչի՝ մեծ իմաստուններ և օրենսդիր, ազգի գոյապահպանության համար պայքարող հայրենասեր կաթողիկոսի կենսագրությունը ուսանելի է և ամենայն փառաբանության արժանի:

ИОАНН ОДЗНЕЦИ И ЕГО ВРЕМЯ

Е.С.СААКЯН

Резюме

Деятельность И.Одзнеци всецело связана с национально-освободительной борьбой армянского народа, на протяжении которой он проявил себя как исключительный дипломат. Используя противоречия могущественных соседей, Одзнеци развернул борьбу за сохранение национальной самостоятельности, что нашло непосредственное отражение в идеологической сфере. Последнее в свою очередь привело к политическому радикализму. Некогда могущественная Византия ослабла в результате частых набегов арабов и не в состоянии была распространять свою власть на Армению. Воспользовавшись этими благоприятными обстоятельствами, Армения сумела противостоять религиозному и политическому влиянию Византии. И.Одзнеци был единственным в числе духовных и политических деятелей Армении, который, вступив в союз с арабами, сумел заставить их пойти на уступки в пользу Армении.

---

[12] Երվանդ վարդապետ Տեր-Մինասյան, Հայոց եկեղեցու հարաբերությունները ասորոց եկեղեցիների հետ, Էջմիածին, 1908, էջ 181-192:

[13] Այս մասին տե՛ս նաև Ե.Գալստյան, Հովհան Օձնեցուն վերագրված մի գրության հեղինակի հարցի շուրջը (ՊԲՀ, 1977, № 3):